ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ

Ժնև

Գերհարգելի դոկտ. Ֆիլիպ Փոթըր,

Ութրեխտի ժողովից վերադարձին Մեր ներկայացուցիչները՝ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը և պրն. Պարգև Շահբազյանը ուրախությամբ հայտնեցին Մեզ Ձեր ընտրության մասին, որպես ընդհանուր քարտուղար Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, ընտրություն, որ կատարվել է խանդավառ մթնոլորտում, սրտառուչ միաձայնությամբ:

Այս երջանիկ ափիթով հաճելի է Մեզ շնորհավորել Ձեզ հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և աղոթել, որ Աստված Ձեզ զորացնի հոգևոր նոր եռանդով և լուսավորի նոր ներշնչումներով, որպեսզի փայլուն հաջողություններ արձանագրեք Ձեր առաքելության ճանապարհին՝ քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ շարժման գլուխը կանգնած:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու Մայր Աթոռ ս. Էջմիածնից հղում ենք Ձեզ Մեր եղբայրական սիրո ողջույնը ի Քրիստոս:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

16-ը սեպտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին